«ԱՐՄԱՎԻՐ 1» ՎԿ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ ՈՒսուցչի համագործակցումը սովորողների ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների հետ սովորողների կրթության կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցերում:

Հետազոտող ուսուցիչ՝ Սիրանուշ Ավետիսյան

Ալաշկերտի միջնակարգ դպրոց ՊՈԱԿ

Մենթոր ուսուցիչ՝ Արմինե Անտոնյան

ԱՐՄԱՎԻՐ- 2022

Բովանդակություն

1.Ներածություն
2. Մաս 1 աշխատանքային դաստիարակություն ընտանիքում և դպրոցում:
3. Մաս 2 ծնող-ուսուցիչ փոխհարաբերությունը և դրա ներգործությունը ուսումնական գործընթացի վրա:
4. Մաս 3 ուսուցիչների և ծնողների համագործակցությունը:
5. Մաս 4 ուսուցիչ-ծնող համագործակցությունը՝ որպես ուսուցման արդյունավետության գրավական:
6.Եզրակացություն, առաջարկություններ:
7.Օգտագործված գրականություն :

ՈՒսուցչի համագործակցումը սովորողների ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների հետ սովորողների կրթության կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցերում:

Մեկ ուրիշին կրթելու համար, առաջին հերթին պետք է ինքներս մեզ դաստիարակենք:

Գոգոլ

Ներածություն

Երեխաները մեր ապագան են: Սա իրականության հանրահայտ ձևակերպումներից է: Ինչպիսին կլինի մեր ապագան սա պայմանավորված է այն իրողությամբ, թե ինչպիսի երեխաներ կկրթենք ու կդաստիարակենք մենք :

Համայնքային կրթությունը համայնքի զարգացման մի մոտեցում է, որը կարևորում է կրթության անհրաժեշտությունը համայնքի բոլոր անդամների համար:

Դպրոցն այս նոր կարգավիճակին անցնելու պարագայում ստանձնում է համայնքի կրթության և դաստիարակության կարիքները հոգալու պարտականությունը:

Արդի խնդիրներն են՝

.Ներկայիս սոցիալ-տնտեսական ծանր պայմանները, որոնք ազդել են թե՛ դպրոցի, թե՛ հասարակության վրա, իսկ հասարակության կարևորագույն օղակը՝ ընտանիքը, դարձել է ներտ, թուլացել է դպրոց-ընտանիք կապը:

.Ընտանիքի ինստիտուտի թուլացում:

.Դպրոցի դերի նվազում:

.<<Փողոցի>> երեխաներ երևույթի առաջացում:

.Գործազրկության աճի միտում:

Շատ ընտանքիներ, հայտնվելով սոցիալական վատ պայմաններում խարխլվում են,երեխաները մնում են ծնողական ուշադրությունից դուրս:

Հարկավոր է մի խթանիչ ուժ, որը կօգնի ծնողին և ընտանիքին:

Համայնքային դպրոցները հնարավորություն են տալիս ամրապնդել ընտանիք-դպրոց կապը՝ տարբեր միջոցների կիրառմամբ:

Լուծման հնարավոր ուղիները՝

.Ծնողական համալսարանների ստեղծում:

.Զրույցներ և դասախոսություններ ծնողների շրջանում:

.Հոգեբանական զրույցներ:

.Մշակութային միջոցառումներ:

.Այցելություն ընտանիքներ:

Դաստիարակության մեջ ամբողջ գործն այն է, թե ով է դաստիա-
բակում:

Պիսարև

Ընտանիքը հասարակության բյուրեղն է:

Վ. Հյուգո

Եվ դաստիարակությունը, և կրթությունը անբաժան են: Անհնար է
կրթել առանց գիտելիքներ փոխանցելու, բոլոր գիտելիքները գոր-
ծում են դաստիարակություն:

Լ. Տոլստոյ

1. Աշխատանքային դաստիարակություն ընտանիքում և դպրոցում:

Ընտանիքում աշխատանքային դաստիարակության հիմնական խնդիրն է երեխայի մեջ զարգացնել բարոյական, ֆիզիկական և մտավոր կարողություններ:

Ընտանիքում աշխատանքային գործունեության ընթացքում երեխայի մեջ զարգանում են պատասխանատվությունը, մաքրասիրությունը, կոկիկությունը, ուրիշների աշխատանքը գնահատելը և հարգելը:

Ծնողները հաճախ խնդիրներ են ունենում ծույլ երեխաների դաստիարակության հարցում : Ծուլությունն ի հայտ է գալիս ոչ ճիշտ դաստիարակության հետևանքով:

Ծուլությունից ազատվելու միակ միջոցը երեխային պարբերաբար աշխատանքային տարբեր ոլորտներում ներգրավելն է:

Եթե երեխան չունի աշխատելու ցանկություն, կարելի է կիրառել խնդրանքը:

Ժամանակակից պայմաններում անհնար է իրականացնել երեխայի լիարժեք աշխատանքային դաստիարակություն միայն ներընտանեկան մթնոլորտում:

Այս հարցում ծնողները պետք է սերտորեն համագործակցեն ուսուցչի հետ:

Աշխատանքային դաստիարակության գործում ծնողի(խնամակալի) և ուսուցչի համագործակցության ապահովումը լավագույն ձևով կարող է իրականացնել դասղեկը:

Սկսած առաջին դասարանից պետք է դաստիարակչական գործունեության ընթացքում համագործակցի ծնողների հետ:

Կարելի է կազմակերպել էքսկուրսիաներ ծնողների և աշակերտների հետ, ծանոթացնել տարբեր արտադրական գործընթացներին:

Դասղեկի և ծնողի(խնամակալ) համագործակցության արդյունքում երեխաների մեջ կզարգանա աշխատանքի նկատմամբ հետաքրքրասիրությունը, կբարձրանա նրանց պարտքի զգացումը, հասարակությանը օգտակար լինելու ցանկությունը, աշխատելու անհրաժեշտությունը:

Այսպիսով սովորողների աշխատանքային դաստիարակությունը ներառում է կյանքի բոլոր ոլորտները, և այն պետք է իրականացվի մանկավարժական բոլոր միջոցների կիրառմամբ:

Այն միաժամանակ թույլ է տալիս երեխային անմիջականորեն գնահատել աշխատանքի

գեղեցկությունը և զգալ դրա վերափոխող ուժն ու գրավչությունը:

2. Ծնող-ուսուցիչ փոխհարաբերությունը և դրա ներգործությունը ուսումնական գործընթացի վրա:

Հասարակության յուրաքանչյուր անդամի զարգացման հիմքում ընկած է կրթությունը :

Կրթության համար պատասխանատվություն են կրում ծնողը և ուսուցիչը:

Եթե ուզում ենք բավարարել հասարակության կրթական կարիքները անհրաժեշտ է ծնողներին ներգրավել ուսումնական գործընթացի մեջ՝ ուսուցումն առավել արդյունավետ դարձնելու համար:

Դաստիարակության հաջողությունն ապահովող առաջին պայմանը համերաշխ ընտանիքն է: Երեխայի դաստիարակության հարցում մեծ նշանակություն ունեն ծնողների փոխհարաբերությունները երեխաների և ուսուցիչների հետ:

Ծնողները երեխաների առաջին կրթողներն են: Նրանք ունեն իրավունքներ և պարտականություններ իրենց երեխաների կյանքի, մտավոր, ֆիզիկական և արժեքային համակարգը զարգացնելու համար:

Ծնողները պատասխանատվություն են կրում նաև դպրոցական երեխաների կրթության համար: Դժվարին և կարևոր պատասխանատվություն է կրում ուսուցիչը:

Ուսուցչի պարտքն է ճանաչել և հասկանալ երեխաների ֆիզիկական և հոգեբանական վիճակները և պաշտպանել նրանց դպրոցական կյանքի բոլոր իրավիճակներում:

Դաստիարակչական ներգործությունը մշտապես պետք է ուղեկցվի ընտանեկան դաստիարակության սերտ համագործակցությամբ:

Դպրոցում դաստիարակությունն ընթանում է մի շարք ուղղություններով՝ ուսուցում, գնահատում և հասակակիցների հետ փոխադարձ շփումների կարգավորում:

Կրթության բնագավառում պետական քաղաքականության հիմքն ազգային դպրոցն է, որի գլխավոր նպատակը մասնագիտական պատշաճ պատրաստվածություն ունեցող և համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, մարդասիրության հոգով դաստիարակված անձի ձևավորումն է :

Ժամանակի մեծ մտավորականներից մեկն ասել է.<<Ուսուցիչն աշխատում է ամենապատասխանատու խնդրի վրա, նա ձևավորում է մարդուն>>:

3. Ուսուցիչների և ծնողների համագործակցությունը:

ՈՒսուցչի և ծնողի համագործակցության գործընթացը ենթադրում է միասնական մոտեցումներ և պարտավորություններ երեխայի կրթական գործընթացում:
Համագործակցության ընթացքում դպրոցը պետք է ներգրավի ծնողին դպրոցական միջավայրում՝ թույլ տալով նրանց ակտիվ մասնակցել դպրոցի կազմակերպած միջոցառումներին՝ հանդես գալով որպես լիիրավ գործընկերներ:Այս գործընթացը նպաստում է ծնողավարման հմտությունների զարգացմանը:Համագործակցության արդյունքում փոփոխվում են ծնողի սոցիալական, հուզական և անձնային հատկանիշները: Նրանք սկսում են ավելի լավ հասկանալ իրենց երեխաներին, գնահատում են երեխայի ձեռքբերումները, հաճույքով միանում են երեխայի կրթության և դաստիարակության գործընթացին, դրական հարաբերություններ են ստեղծում իրենց երեխայի ուսուցիչների հետ:

Արդյունավետ համագործակցության համար անհրաժեշտ է ստեղծել՝

- գործուն և ակտիվ խմբեր,որոնք ուղղված են գործողությունների պլանավորմանը, կազմակերպմանը, իրագործմանն ու գործընկերային հարաբերությունների գնահատմանը,
- քաղաքականություն և ռազմավարություն դպրոցական կրթության համատեքստում, որտեղ հստակ ամրագրված կլինեն արդյունավետ համագործակցության սկզբունքները և փորձը,
- արդյունքների գրանցման, հաջողությունների հաշվետվության ներկայացման հստակ մեխանիզմներ,
- տարեկան պլանի իրականացման համար համագործակցային գործողություններ,
- տեղեկատվական նյութերի տրամադրման հարթակներ՝ դպրոցներում իրականացվող համագործակցային ծրագրերին օժանդակելու նպատակով:

Բաց դաս, թե ծնողական ժողով, ցերեկույթ, թե շաբաթօրյակ, մրցույթ, թե արշավ,ծնողներն ամենուր պետք է ներկա լինեն:

3.1 Համագործակցության սկզբունքները

Անառարկելի է, որ ուսուցիչ-ծնող(խնամակալ) համագործակցությունը անժխտելի դրական ազդեցություն է թողնում ուսումնական գործընթացի բոլոր մասնակիցների վրա և բարձրացնում է ուսումնական գործընթացի արդյունավետությունը:Ուսուցիչ-ծնող համագործակցությունը բարդ գործընթաց է, որն ունի բազնաթիվ սկզբունքներ.

.**Վստահել:** Արդյունավետ շփման համար կարևոր է, որ ուսուցիչները վստահեն ընտանիքին, իսկ ընտանիքն էլ իր հերթին վստահի ուսուցիչներին:Երբ ծնողը ինչ-որ բան է պատմում ուսուցչին, պետք է վստահեցնել նրան, որ այդ տեղեկությունը գաղտնի է:

.**Պահպանել երկկողմանի կապ:** Այն թույլ է տալիս երկու կողմերին էլ հասկանալ միմյանց պահանջները և նպատակները:Երբ ուսուցիչը խոսում է ծնողի հետ, հարցերի միջոցով կարող է տեղեկություն հավաքել ոչ միայն սովորողի, այլև նրա ընտանիքի վերաբերյալ:

.**Համագործակցել:** Կողմերը ընդհանուր եզրեր պետք է գտնեն հաջողության հասնելու համար: Ուսուցիչը պետք է միշտ հիշի, որ ընտանիքները տարբեր են և բոլորի հետ գործընկերային հարաբերություններ ստեղծելիս, պետք է ցուցաբերել անհատական մոտեցում:

.**Կրել ընդհանուր պատասխանատվություն:** Ծնողները և ուսուցիչները պետք է կիսեն պատասխանատվությունը տանը և դպրոցում ծագած խնդիրների լուծման ժամանակ՝ սահմանելով հստակ նպատակներ, ռազմավարություններ և ձգտելով միևնույն արդյունքին:

.**Պահպանել ջերմ հարաբերություններ:** Ուսուցիչը ծնողների հետ պետք է պահի ջերմ, բարիդրացիական հարաբերություններ:Յուրաքանչյուր իրավիճակում պետք է հասկանա և առաջարկի իր աջակցությունը ծնողին:

.**Խթանել և քաջալերել:** Որպեսզի ծնողը իրեն զգա արժեքավոր, ուսուցիչը պետք է լսի ծնողի առաջարկները, ուսուցման արդյունավետ կազմակերպելու իր մոտեցումները:

Ընտանիքը և դպրոցը դաստիարակության երկու հիմնական հավասարազոր սուբյեկտներ են: Միայն այս երկու օղակների համագործակցության դեպքում է հնարավոր ձևավորել որակներ: Համագործակցության ընթացքում ծնողները պետք է նկատեն ուսուցիչների կողմից թույլ տրվքած սխալները և ուսուցիչները՝ ծնողների կազմակերպած ընտանեկան դաստիարակության ընթացքում նկատված սխալները :

Սակայն փոխքննադատությունը պետք է լինի հիմնավորված ու կառուցողական:

3.2 Համագործակցության ուղղությունները

Կրթական գործընթացին ծնողներին ներգրավելու և նրանց հետ արդյունավետ համագործակցելու նպատակով իրականացվող աշխատանքները տարվում են չորս հիմնական ուղղություններով՝

.**Ճանաչողական-** Այս ուղղության նպատակն է ծնողներին ծանոթացնել երեխաների տարիքային և հոգեբանական զարգացման առանձնահատկություններին և նրանց մոտ ձևավորել երեխաների դաստիարակման գործնական հմտություններ: Այն իրականացնում են հավաքների, խորհրդատվությունների, անհատական զրույցների, սեմինարների, ցուցահանդեսների, ժամանցային միջոցառումների, համատեղ էքսկուրսիաների, զբոսանքների, բաց դասերի միջոցով:Դրանք հնարավորություն են տալիս ծնողներին դիտարկել իրենց երեխաներին այնպիսի իրավիճակներում, որոնք տարբերվում են ընտանեկան իրավիճակներից, համեմատել իրենց երեխայի վարքն ու հմտությունները մյուս երեխաների հետ, ուսուցիչներից ընդօրինակել դաստիարակության և ուսուցման մեթոդներ և հնարներ, և ուսուցչի հետ ստեղծել զարգացնող միջավայր երեխաների համար:

.**Տեղեկատվական-վերլուծական-** Այս ուղղության նպատակն է՝ բացահայտել ծնողների հետաքրքրություններն ու պահանջմունքները, ինչպես նաև նպաստել ուսուցիչների, սվորողների և ծնողների միջև հուզական կոնտակտի հաստատմանը:Կարելի է կիրառել տարբեր մեթոդներ. անկետավորում, թեստավորում, անհատական զրույցներ:

.**Ակնառու-տեղեկատվական** ուղղության նպատակն է տեղեկատվություն հաղորդող նյութերը ձևակերպել և մատուցել այնպես, որ գրավի ծնողների ուշադրությունը, որ չկորի դրանց հանդեպ հետաքրքրությունը(նյութը տպված լինի գունավոր թղթերի վրա, լինեն նկար-սիմվոլներ, երեխաների խմբային նկարներ:)

.**Ժամանցային –** Միտված է ստեղծելու ջերմ, վստահելի, հուզական հարաբերություններ ծնողների, ուսուցիչների, սովորողների միջև:Այս ուղղությունն ամենապահանջվածն է, ամենացանկալին, ամենաօգտակարը:

Ժամանցները, տոները պետք է կազմակերպել ոչ թե ծնողների համար, այլ ծնողների անմիջական մասնակցությամբ, որպեսզի նրանք պատկերացնեն, թե որքան ուժ, եռանդ պետք է ներդնել ցանկացած միջոցառում կազմակերպելու համար:Արդյունավետ է նաև այդ միջոցառումներին բոլոր ծնողների համագործակցությունը և շփումը միմյանց հետ:

4. Ուսուցիչ-ծնող համագործակցությունը՝ որպես ուսուցման արդյունավետության գրավական:

Երեխայի արդյունավետությունը դպրոցում պայմանավորված չէ միայն ուսումնական գործունեության հաջող մեկնարկով: Դրան հասնելու քայլերը պետք է կատարվեն ավելի վաղ՝ մինչ դպրոց հաճախելը:Խոսքն այն մասին չէ, թե ուսման ընթացքում ծագած խոչընդոտներից մասնավորապես դպրոցական կյանքի առաջին տարում առկա մի շարք խնդիրներից խուսափելու համար հարկավոր է երեխային դպրոց ճանապարհել արդեն գրաճանաչ ու բազում գիտելիքներով ծանրաբեռնված: Պարզապես անհրաժեշտ է հնարավորինս օգնել երեխային և ծնողին այդ դժվարությունները սահուն, առանց հուզական լարվածության ու հոգեկան ապրումների հաղթահարելու համար:Այսօր էլ այդ երեխաներին ընդունում ենք դպրոց և բախվում մի շարք խնդիրների, որոնք ձևավորվել են դեռևս երեխայի նախադպրոցական տարիքում:

Ուսուցիչը պետք է ձեռնամուխ լինի համակարգված հոգեբանամանկավարժական մեթոդական աշխատանքի:Այն նպատակ է հետապնդում օգնել ծնողին՝ ճիշտ կողմնորոշվելու, դպրոցականի առջև ծառացած խնդիրները հասկանալու և դրանք ժամանակին ու արդյունավետ լուծելու համար:Պետք է ապահովել ծնողների լիարժեք մասնակցությունը երեխայի ուսումնադաստիարակչական գործընթացին:

Երբեմն ծնողները անհիմն ու ավելորդ մտահոգություն են դրսևորում, թե երեխան կթերանա, չի կարողանա սովորել դպրոցում:Դրանք պատճառ են դառնում, որ դեռ դպրոց չհաճախած երեխան խուսափի, վախենա և հրաժարվի դպրոցական դառնալու ցանկությունից:Այդ խնդրի հաղթահարման նպատակով կարևոր է ծնողների հետ ««Դպրոցաֆոբիա »» թեմայով սեմինար անցկացնել:

Այսպիսով երեխայի բարեհաջող մուտքը դպրոց, կախված է նրա հոգեկան պատրաստվածության աստիճանից: Այստեղ մեծ է ծնողի դերը:Այն պետք է երեխայի համար լինի հոգեկան հավասարակշռության, պաշտպանվածության և ապահով զգացողության օրրան: Որպեսզի երեխան հաղթահարի իր տարիքին բնորոշ վախերը, անհրաժեշտ է նախևառաջ պարզել ծնողների թաքնված, չգիտակցված վախերը:

Կրտսեր տարիքի երեխաները գտնվում են սեփականության ընկալման առումով բավականին բարդ փուլում:Նրանք դեռևս նոր են փորձում դիմադրել անմիջական մղումների ազդեցությանը:

Եթե մի բան նրանց դուր է գալիս, միշտ չէ, որ ընդունակ են զսպել այն անմիջապես վերցնելու բնական ցանկությունը:

Ներկայացնեմ մի իրավիճակ, որը տեղի է ունեցել իմ դասարանում: Աշակերտներից մեկը վերցրել էր ընկերոջ սոսինձը:Ճիշտ է, նա վերադարձրեց այն և ներողություն խնդրեց ընկերոջից՝ պատճառաբանելով, որ պատահաբար է դա արել:

Դասերի ավարտից հետո անհատական զրույցի միջոցով փորձեցի երեխային բացատրել, որ առանց հարցնելու որևէ բան վերցնելը գողություն է համարվում:Իսկ դա շատ վատ բան է:

«Ընկերներդ կարող են աստիճանաբար խուսափել քեզ հետ շփվել ու դու կմնաս առանց ընկերների, միայնակ ու անօգնական»,-ասացի երեխային;

Արարքի մասին անմիջապես տեղեկացրի ծնողին :Անհատական զրույցի, երկխոսության միջոցով ներկայացրի երեխայի կողմից թույլ տրված սխալ արարքը, և պայմանավորվածություն ձեռք բերվեց երկկողմ ու հետևողական գործունեության շնորհիվ կանխել երեխայի մեջ այդ վատ վարքագծի ձևավորումը ;

Մեզանում այդ փոխադարձ կապն անընդմեջ շարունակվող գործընթաց է :

Պետք է իրազեկել ծնողին, երեխայի աճն ու ձեռքբերումները դիտարկել որպես անհատական զարգացում:

Այդ նպատակով ծնողների հետ անցկացրեցի հետաքրքիր թեստ-խաղ.

Խմբի բոլոր ծնողներին բաժանեցի ճերմակ միանման անձեռոցիկներ և հանձնարարեցի մի քանի ծալվածք տալով, կտրել անձեռոցիկի չորս ծայրերը, ապա բացել ու համեմատել մյուս ծնողների անձեռոցիկների հետ:Ի զարմանս ծնողների՝ բոլորի անձեռոցիկների կտրվածքները տարբեր էին, թեև բոլորն էլ ստացել էին նույն հրահանգը:

Այս պարզագույն թեստ-խաղի օրինակով ծնողները համոզվեցին, որ յուրաքանչյուր երեխա եզակի անհատականություն է: Ուստի նրա ձեռքբերումները պետք է համեմատել միայն իր նախորդ փուլի արդյունքների հետ:

Առաջին հանդիպումիվ հետո կարծես թե ծնողների մոտ այնքան էլ համոզմունքներ չձևավորվեցին:Ոմանք ընդունեցին, ոմանք հետաքրքրվեցին, ոմանք էլ անտարբեր մնացին:

Թեստ-խաղը կրկնեցի երկրորդ հանդիպման ժամանակ և ազդեցությունը ավելի խորն էր:

Շատերը համոզվեցին, մեծացավ հետաքրքրվողների քանակը: Այս աշխատանքից հետո ստացված ազդեցությունը պարզելու համար ծնողներին առաջարկեցի

<<Ես անհատականություն եմ, խնդրում եմ ինձ հետ հաշվի նստել>> վերնագրով փոքրիկ շարադրանք:

Այն ներառելու էր ծնողի կարծիքը, որը վերաբերում է իր երեխային՝ որպես փոքրիկ մարդու, նրա անհատականությանը և անձնակենտրոն հարցի վերաբերյալ տեսակետին :

Ուսուցիչը կապեր հաստատելով աշակերտի ծնողի հետ՝ լուծում է հետևյալ

խնդիրները.

1.ճանաչել երեխայի ընտանիքը,

2. ուսումնասիրել երեխայի սոցիալական միջավայրի ազդեցությունը նրա անձի ձևավորման վրա,

3.օգնել ծնողներին՝ ընտանեկան պայմաններում երեխային դաստիարակելու,

4. կազմակերպել ծնողների մանկավարժական իրազեկումը

5.չեզոքացնել ընտանիքի բացասական ազդեցությունը



Եզրակացություն

Ելնելով բոլոր վերլուծություններից՝ կարելի է գալ այն եզրակացության, որ ուսուցիչն ու ծնողը(խնամակալը) ամուր դաշնակիցներ են:
Միայն նրանց արդյունավետ համագործակցության դեպքում կարելի է սպասել դրական արդյունքներ:
Այն արդի պահանջ է: Երեխայի ուսումնադաստիարակչական գործունեության ճանապարհին ուսուցիչը և ծնողը ոչ թե համընթաց կքայլեն երեխայի հետ, այլ մի քանի քայլ առաջ՝ կանխատեսելու հնարավոր խոչընդոտները և օգնելու երեխային հեշտությամբ հաղթահարել դրանք:
Ուսուցչի և ծնողի համագործակցությամբ նրանք դառնում են ուսուցման գործընթացի և արդյունքների համար պատասխանատվության կրողներ, իսկ ուսուցումն անձնակենտրոն է:
Կբարձրանա դպրոցի վարկանիշը, հեղինակությունը, հարգանք կստեղծվի ուսուցչի և ուսման նկատմամբ:
Համագործակցության արդյունքում կձևավորվի համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, մարդասիրության ոգով դաստիարակված, մասնագիտական պատշաճ պատրաստվածություն ունեցող սերունդ:
Ծնող-ուսուցիչ համագործակցությունը կօգնի խարխլված ընտանիքների կայունացմանը:
Ի վերջո ընտանիքների բարոյահոգեբանական մթնոլորտի առողջացմամբ կլուծվի համայնքի զարգացման խնդիրներից մեկը:

Օգտագործված գրականություն

1.Հ. Մ. Մախչանյան «Հանուն ուսուցման բարձր որակի» Երևան 1986թ.

2.Տարրական դասարաններում դասավանդող ուսուցիչների նախաատեստացիոն վերապատրաստման դասընթացի ուսումնական նյութերի փաթեթ:

3.Ջ. Հ. Գյուլամիրյան «Երկխոսություններ ծնողների հետ» Երևան Զանգակ-97

Ամսագրեր

4.Նախաշավիղ 1.2003

5. Հոգեբանությունը և կյանքը 3-4 2002

6.Գիտելիք 1.2001

7.Դպրոց և ընտանիք 4.2010